**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 570

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՆԹԱՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/7 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ՍԵՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. օգոստոսի 24-ի թիվ 515 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Մանթաշյան փողոցի թիվ 3/7 հասցեի 19.0քմ հողամասում, քաղ. Սևան Պետրոսյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 19.0քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2011թ. սեպտեմբերի 20-ի թիվ 184 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Սևան Պետրոսյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Մնաթաշյան փողոցի թիվ 3/7 հասցեի 19.0քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 19.0քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Սևան Պետրոսյանին, հետևյալ արժեքներով.
- ավտոտնակ՝ 19.0 քմ – 24700 դրամ,

- հողամաս՝ 19.0 քմ - 23598 դրամ:
2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Սնան Պետրոսյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 23598 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 24700 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 571

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 88/4 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ԱՆԱՍՏԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 5-ի թիվ 536 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Գետափնյա փողոցի թիվ 88/4 հասցեի 27.0քմ հողամասում, քաղ. Անաստաս Ղուկասյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 27.0քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2011թ. սեպտեմբերի 20-ի թիվ 185 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Անաստաս Ղուկասյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Գետափնյա փողոցի թիվ 88/4 հասցեի 27.0քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 27.0քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Անաստաս Ղուկասյանին, հետևյալ արժեքներով.
- ավտոտնակ՝ 27.0 քմ – 45900 դրամ,
- հողամաս՝ 27.0 քմ - 51678 դրամ:
2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական

վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Անաստաս Ղուկասյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 51678 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 45900 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 572**

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբերի 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12/4 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ԱԼՎԱՐԴ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 15-ի թիվ 554 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Գետափնյա փողոցի թիվ 12/4 հասցեի 29.6քմ հողամասում, քաղ. Ալվարդ Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 29.6քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2011թ. սեպտեմբերի 20-ի թիվ 186 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Ալվարդ Դավթյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Գետափնյա փողոցի թիվ 12/4 հասցեի 29.6քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 29.6քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Ալվարդ Դավթյանին, հետևյալ արժեքներով.
- ավտոտնակ՝ 29.6 քմ – 50320 դրամ,
- հողամաս՝ 29.6 քմ - 56655 դրամ:

2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական

վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Ալվարդ Դավթյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 56655 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 50320 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 573

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20/3 ՀԱՍՑԵԻ 200.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2110750, տրված 22.05.2009թ., Դիլիջանի Աբովյան փողոցի թիվ 20/1 հասցեի բնակելի տունը 380.0քմ տնամերձ հողամասով պատկանում է քաղ. Վոլոդյա Ալիխանյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված բնակելի տան տնամերձ հողամասին կից, Աբովյան փողոցի թիվ 20/3 հասցեի 200.0քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված բնակելի տան սեփականատեր Վոլոդյա Ալիխանյանին: Վերոգրյալ 200.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում: Նշված 200.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 2845526, տրված 25.08.2011թ.: Համայնքի ավագանին 2011թ. օգոստոսի 20-ի թիվ 183 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 200.0քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Վոլոդյա Ալիխանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

[illegible]
վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Վոլոդյա Ալիխանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 248400 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 574

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբեր 2011թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 72 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. սեպտեմբերի 1-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 72 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Թամարա Եղիազարյանը, Ալբերտ Եղիազարյանը և Արման Եղիազարյանը: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին՝ նշված հասցեի իրենց բնակելի տան տնամերձ հողամասի սահմանները ճշտելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասը բաղկացած է երկու գույքային միավորներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 110.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 110.0քմ՝ 41.0քմ և 69.0քմ մակերեսներով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 72 հասցեի 110.0քմ ընդհանուր մակերեսով /41.0քմ և 69.0քմ/ տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ քաղաքացիներ Թամարա Եղիազարյանի, Ալբերտ Եղիազարյանի և Արման Եղիազարյանի սեփականության իրավունքով:

2. Քաղաքացիներ Թամարա, Ալբերտ և Արման Եղիազարյանների սեփականությունը հանդիսացող, Մյասնիկյան 72 հասցեի տնամերձ հողամասի 2-րդ գույքային միավոր հանդիսացող 69.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մյասնիկյան փողոց թիվ 72/2, 41.0քմ մակերեսով հողամասը թողնել Մյասնիկյան 72 հասցեով:

3. Պարտավորեցնել համասեփականատերերին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 575

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 1189.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 17-ի թիվ 559 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1189.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը աճուրդի ներկայացնելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը: Վերջիններս հաստատվեցին համայնքի ավագանու 2011թ. սեպտեմբերի 20-ի թիվ 187 որոշմամբ՝ հետևյալ աճուրդային լոտ-երով և մեկնարկային գներով.
1. Լոտ 38/ՔՀ-11/ - Արցախի փողոց I նրբ. թիվ 34, 600.0քմ, ծածկագիրը՝ 086-037, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1500000 դրամ,
2. Լոտ 39/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց I նրբ. թիվ 3/1, 449.0քմ, ծածկագիրը՝ 053-376, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ բնակելի կառուցապատման, հողամասի մեկնարկային գինը՝ 1122500 դրամ,
3. Լոտ 40/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 49, 140.0քմ, ծածկագիրը՝ 075-021, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 350000 դրամ:
Ելնելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 և 68 հոդվածների պահանջներից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2011 թվականի սեպտեմբերի 27-ից հայտարարել Դիլիջանի Արցախի փողոց I նրբ. թիվ 34, Սարալանջի փողոց I նրբ. թիվ 3/1, Մոլդովական փողոց թիվ 49 հասցեների հողամասերի աճուրդ:
2. Աճուրդի օր նշանակել 2011 թվականի հոկտեմբերի 27-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի աճուրդային հանձնաժողովին հանձնարարել.
1) սահմանել աճուրդի պայմանները,
2) հողամասի աճուրդային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար «Ճարտարապետահատակագծային առաջադրանքները»,
3) նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 576

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*26 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի 8 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2011թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված երրորդ եռամսյակի եկամուտներից կատարել տեղաշարժ չորրորդ եռամսյակ

1) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար – 2500000դրամ

2) Տեղական վճարներ

· Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար – 3000000դրամ

· Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար – 500000 դրամ

3) Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ – 4000000 դրամ

2. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ.բյուջեով նախատեսված երրորդ եռամսյակի

ծախսերի նախահաշիվներից կատարել տեղաշարժ չորրորդ եռամսյակ
1) «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» /բաժին 01 խումբ 01 դաս 01/ 4111հոդված – 400000 դրամ, 4112 հոդված – 1700000 դրամ, 4131 հոդված – 700000 դրամ
2) «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)/»բաժին 06 խումբ 06 դաս 01/ 4511- հոդված - 1500000 դրամ
3) «Նախադպրոցական կրթություն»/բաժին 09 խումբ 01 դաս 01/ 4511 հոդված – 5700000 դրամ (Թիվ 1 մանկապարտեզ – 1800000 դրամ, Թիվ 2 մանկապարտեզ – 1100000 դրամ Թիվ 3 մանկապարտեզ -2100000դրամ Թիվ 4 մանկապարտեզ – 700000դրամ)
3. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան եկամուտների և ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 577

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*28 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 117 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Հրանտ Ամյանը՝ Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 117 հասցեի, իր տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողիատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 600.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 592.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 292.0քմ հողամասը, որը բաղկացած է երկու գույքային միավորներից՝ 171.0քմ և 121.0քմ մակերեսներով, ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /*կցվում է հողամասի* գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Մյասնիկյան փողոցի թիվ 117 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 900.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային

օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 117 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 900.0քմ մակերեսով, քաղ. Հրանտ Վարդգեսի Ամյանի /ծնված՝ 12.06.1955թ./ սեփականության իրավունքով:
2. Մյասնիկյան փողոցի թիվ 117 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 171.0քմ և 121.0քմ մակերեսներով հողամասերն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել քաղ. Հրանտ Ամյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 578

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*29 սեպտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 308/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2007թ. հոկտեմբերի 3-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 308 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Գոհար Գրիգորյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 760.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 1503.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 1203.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կալինինի փողոցի թիվ 308 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 1060.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության

կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 308 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1060.0քմ մակերեսով, քաղ. Գոհար Գրիգորյանի /ծնված՝ 14.01.1924թ./ սեփականության իրավունքով:
2. Կալինինի փողոցի թիվ 308 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 1203.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4.Կալինինի փողոցի թիվ 308 հասցեի բնակելի տանը և 1060.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 308/1:
5. Պարտավորեցնել քաղ. Գոհար Գրիգորյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 579

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 նոյեմբեր 2011թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել Արմեն Նորայրի Հայրապետյանը, իր կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով:Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ. սեպտեմբերի 20-ի նիստում և թիվ 182 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի թիվ 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 2 երեք սենյականոց՝86.5ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն, ուղղակի վաճառքի ձևով,129750դրամ արժեքով օտարել Արմեն Նորայրի Հայրապետյանին որպես սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 580

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 նոյեմբեր 2011թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել Էլմիրա Աղամալյանը,իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով:Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ.սեպտեմբերի 20-ի նիստում և թիվ181 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի թիվ 12կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Շահումյան փողոցի թիվ 12 շենքի թիվ19 մեկ սենյականոց՝26.6ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 39900դրամ արժեքով, օտարել Էլմիրա Աղամալյանին, ամուսնուն՝ Երվանդ Էլլարյանին, տղային՝՝Նարեկ Երվանդի Էլլարյանին, աղջկան՝ Լիդա Երվանդի Էլլարյանին որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 նոյեմբեր 2011թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 2.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂ. ԷԴԻԿ ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի՝ Դիլիջանի Մխիթարյան փողոցի թիվ 2 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի մի մասի սեփականության իրավունքը պատկանում է քաղ. Էդիկ Ալիխանյանին, իսկ բնակելի տան և տնամերձ հողամասի մյուս մասի նկատմամբ սեփականության իրավունքը քաղաքացին ձեռք է բերել 2005թ. դեկտեմբերի 2-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով: Քաղ. Էդիկ Ալիխանյանը դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված հասցեի տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Մխիթարյան փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասի մակերեսը կազմում է 600.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից քաղաքացու կողմից փաստացի ավել օգտագործվում է 2.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացու սեփականության իրավունքը (600.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա են բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության

իրականացման շրջանակներում վերը նշված 2.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղ. Էդիկ Ալիխանյանի սեփականության իրավունքը: Այսպիսով, Մխիթարյան փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 602.0քմ /600.0քմ+2.0քմ/մինչև 20%/:

2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:

3. Պարտավորեցնել քաղ. Էդիկ Ալիխանյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 582

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 295-003 ԵՎ 295-004 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 295-003 և 295-004 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 1500.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 295-008: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 295-008 ծածկագրով, 1500.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Օրջոնիկիձե փողոց IV նրբ. թիվ 92:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 295-003 և 295-004 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 295-008 նոր ծածկագրով, 1500.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 583

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*05 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 181 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂ. ՀՐԱՀԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի համձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 181 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 113-127 ծածկագրով հողում քաղ. Հրահատ Աշոտի Ստեփանյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն, մասնավորապես՝ 32.9քմ մակերեսով ավտոտնակ, 18.3քմ նկուղ /հաշվարկված է արտաքին չափերով/ և 32.9քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Հրահատ Աշոտի Ստեփանյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը տալ նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 181/2:
2. Վերը նշված ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 584

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*05 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13/5 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 14-ի թիվ 549 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Շահումյան փողոցի թիվ 13/1 հասցեի 26.0քմ հողամասում քաղ. Սամվել Սերգեյի Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 26.0քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 2848425, տրված 20.09.2011թ./՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Շահումյան փողոցի թիվ 13/1 հասցեի ավտոտնակի օրինականացման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության

2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Սամվել Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված Շահումյան փողոց թիվ 13/1 հասցեի ավտոտնակին տալ նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 13/5:
2. Դիլիջանի համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան փողոցի թիվ 13/5 հասցեի 26.0քմ հողամասում քաղ. Սամվել Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 26.0քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվարկված է արտաքին չափերով/:
3. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Սամվել Գրիգորյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված զներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 585

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*05 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 72/3 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Զավեն Եսայանը՝ Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 72/33 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող ավտոտնակի սպասարկման հողամասի հողհատկացման հիմքերի վերականգնման և նույն հողամասը իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն, նշված ավտոտնակի սպասարկման հողամասի փաստացի չափը կազմել է 28.8քմ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում: Նշված հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին վերականգնել վերոհիշյալ ավտոտնակի սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը և նույն հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղ. Զավեն Եսայանին:
Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 209 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, 66 և 87 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Զավեն Եսայանին պատկանող ավտոտնակին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 72/3:

2. Վերականգնել Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 72/3 հասցեի ավտոտնակի 28.8քմ սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը և նույն հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղ. Զավեն Եսայանին: Օտարվող հողամասի արժեքը կազմում է 55124 դրամ:

3. Քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

4. Պարտավորեցնել քաղ. Զավեն Եսայանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի արժեքը՝ 55124 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 586

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՍԱՄՍՈՆ-ՇԱՀԵՆ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Երևան քաղաքի Բաբրյուսի փողոց տուն 50 հասցեի բնակիչ Սամսոն-Շահեն Նազարյանին:

2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. Սամսոն-Շահեն Նազարյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 6600000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 275000 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 587

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 7-ի թիվ 542 որոշմամբ 2011թ. հոկտեմբերի 10-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 922.0քմ հողամաս /Լոռ-33(ՔՀ-11), Անդրանիկի փողոց 2-րդ նրբ. թիվ 37/2, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 2305000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 2766000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 2-րդ նրբ. տուն 42 հասցեի բնակիչ Արամ Հարությունյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 2 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Անդրանիկի փողոց 2-րդ նրբ. թիվ 37/2 հասցեի 922.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոց 2-րդ նրբ. տուն 42 հասցեի բնակիչ Արամ Հարությունյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման,

իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Արամ Հարությունյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 2766000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 115250 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անքաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 588

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 7-ի թիվ 542 որոշմամբ 2011թ. հոկտեմբերի 10-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 685.0քմ հողամաս /Լոռ-35(ՔՀ-11), Սարալանջի փողոց 4-րդ նրբ. թիվ 26, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 1712500 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 2055000 դրամ առավելագույն գնով հաղթեց Արարատի մարզ գյուղ Դալարի բնակիչ Հովհաննես Թաղևոսյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 3 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առանձնացված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Սարալանջի փողոց 4-րդ նրբ. թիվ 26 հասցեի 685.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Արարատի մարզ գյուղ Դալարի բնակիչ Հովհաննես Թաղևոսյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Հովհաննես Թաղևոսյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 2055000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 85625 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 589

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 7-ի թիվ 542 որոշմամբ 2011թ. հոկտեմբերի 10-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 787.0քմ հողամաս /Լոռ-36(ՔՀ-11), Սարալանջի փողոց 4-րդ նրբ. թիվ 28, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 1967500 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 2361000 դրամ առավելագույն գնով հաղթեց Երևան քաղաքի Դիմիտրի փողոց տուն 45 հասցեի բնակիչ Լևոն Խաչատրյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 4 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Սարալանջի փողոց 4-րդ նրբ. թիվ 28 հասցեի 787.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Երևան քաղաքի Դիմիտրի փողոց տուն 45 հասցեի բնակիչ Լևոն Խաչատրյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման,

իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Լևոն Խաչատրյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 2361000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 98375 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 590

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՍԵՐԳԵՅ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 7-ի թիվ 542 որոշմամբ 2011թ. հոկտեմբերի 10-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 538.0քմ հողամաս /Լոտ-37(ՔՀ-11), Մոլդովական փողոց թիվ 37, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 1345000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 1614000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց 3 բ շենք բնկ. 11 հասցեի բնակիչ Սերգեյ Հովսեփյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 5 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Մոլդովական փողոց թիվ 37 հասցեի 538.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց 3բ շենք բնկ. 11 հասցեի բնակիչ Սերգեյ Հովսեփյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման,

իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Սերգեյ Հովսեփյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 1614000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 67250 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 591

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ԷԴՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 7-ի թիվ 542 որոշմամբ 2011թ. հոկտեմբերի 10-ին աճուրդի /կրկնաճուրդ/ էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 572.0քմ հողամաս /Լոտ-15(ՔՀ-11), Մոլդովական փողոց թիվ 39, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 1430000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 1716000 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց 3 շենք բնկ. 1 հասցեի բնակիչ Էդուարդ Պողոսյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 6 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Մոլդովական փողոց թիվ 39 հասցեի 572.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց 3 շենք բնկ. 1 հասցեի բնակիչ Էդուարդ Պողոսյանին:

2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Էդուարդ Պողոսյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 1716000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 71500 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂ. ԼԻԼԻԹ ԽԱՆԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 67 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 258-063 ծածկագրով հողում քաղ. Լիլիթ Խանբեկյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն, մասնավորապես՝ 24.0քմ մակերեսով ավտոտնակ /հաշվարկված է արտաքին չափերով/ և 24.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Լիլիթ Խանբեկյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը տալ նոր հասցե՝ Օրջոնիկիձե փողոց թիվ 67/2:
2. Օրջոնիկիձե փողոց թիվ 67/2 հասցեի ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 593

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 574 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 26-ի թիվ 574 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 26-ի թիվ 574 որոշման 1-ին կետի վերջում լրացնել.

*«Քաղաքացու կողմից իրականացված բնակելի տան ինքնակամ ձևափոխությունները, որոնք իրականացվել են մինչև 2001թվականը, առանց քաղաքաշինական նորմերի էական խախտումների, համարել օրինական Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն »:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 594

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ԿԱՐԵՆ ՄԱՆԹԱՇՅԱՆԻ ԴԻԼԻՋԱՆԻ Մ.ԳՈՐԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Կարեն Մանթաշյանը՝ Մ.Գորկի փողոցի թիվ 2/1 հասցեի բնակելի տանը կից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Մ.Գորկի փողոցի թիվ 2/1 հասցեին կից քաղ. Կարեն Մանթաշյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 2000-ական թվականներին, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 350.0քմ հողամաս, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Կարեն Մանթաշյանի կողմից, Մ.Գորկի փողոցի թիվ 2/1 հասցեին կից բնակելի տանը և 350.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մ.Գորկի փողոց թիվ 2/2:

2. Մ.Գորկի փողոցի թիվ 2/2 հասցեի բնակելի տունը և 350.0քմ հողամասը համարել քաղ. Կարեն Ռոբերտի Մանթաշյանի /ծնված 08.03.1974թ./ սեփականությունը:
3. Պարտավորեցնել քաղ. Կարեն Մանթաշյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 595

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 հոկտեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Համիկ Ֆրանգուլյանը, Հակոբջանյան փողոց թիվ 21 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 200.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 270.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված 270.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Հակոբջանյան փողոցի թիվ 21 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 470.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 21 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 470.0քմ մակերեսով, քաղ. Համիկ Ֆրանգուլյանի /ծնված՝ 05.01.1954թ./ սեփականության

իրավունքով:
2. Պարտավորեցնել քաղ. Համիկ Ֆրանգուլյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 596

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*13 հոկտեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 147 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Մանյա Սուրենի Էլորյանը, խնդրելով Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 13-ի թիվ 147 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Մանյա Սուրենի Էլլարյանի» փոխարեն գրել «Մանյա Սուրենի Էլորյան»:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 13-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 147որոշման մեջ Մանյա Սուրենի Էլորյանի ազգանունը թյուրիմացաբար գրվել է «Էլլարյան»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 13-ի թիվ 147 որոշման 13-րդ կետում կատարել փոփոխություն՝ «Մանյա Սուրենի Էլլարյանի» փոխարեն կարդալ «Մանյա Սուրենի Էլորյան»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 597

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*13 հոկտեմբեր 2011թ.*

### ՔԱՂ. ՄԵԼԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 7-ի թիվ 541 որոշմամբ, 2011թ. հոկտեմբերի 11-ին կառուցապատման իրավունքի մրցույթի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 86.0քմ հողամաս /ԼՌՏ-3(ՔԿ-11), Կալինինի փողոց թիվ 99/4 /, 30 տարի ժամկետով, հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման նպատակով, 17200 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով:
Կայացած մրցույթում 20640 դրամ առավելագույն գնով հաղթեց ք. Երևան, Եղ. Թաղնոսյան փ. 12շ. հասցեի բնակիչ Մելանյա Ղազարյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ ընդհանուր օգտագործման, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 78, 80, 81 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 86.0քմ /Կալինինի փողոց թիվ 99/4 հասցեի/ հողամասը 30 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել ք. Երևան, Եղ. Թաղնոսյան փ. 12շ. հասցեի բնակիչ Մելանյա Ղազարյանին: Հողամասի տարեկան վճար սահմանել մրցույթում

առաջարկված առավելագույն գինը, այն է՝ 20640 դրամ:
2. Կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Մելանյա Ղազարյանին.
1) Հողամասի կառուցապատումն իրականացնել Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված 2011թ. սեպտեմբերի 8-ի թիվ 3 /ՔԿ-11/ ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 598

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*13 հոկտեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 43 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. օգոստոսի 23-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Կալինինի փողոցի 4-րդ նրբ. 11-003-076-004 ծածկագրով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Ռոզա Հակոբյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին նշված հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ Հայաստանի ազգային արխիվի Դիլիջանի տարածքային ներկայացուցչության կողից տրված տեղեկանքի, Դիլիջան քաղաքի Շամախյանի Լենինի անվան սովխոզի բանվոր-ծառայողների տնամերձային հողերի գրանցման 1962-1969-1989թթ. թիվ 12 մատյանում քաղ.Աղաբեկ Գրիգորի Հակոբյանի անվամբ Շամախյան թաղամասում գրանցված է 1500.0քմ հողամաս: Հանձնաժողովի կողմից կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի չափը կազմում է 1361.0քմ:
Նշված 1361.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 11-003-076-004 ծածկագրով 1361.0քմ հողամասին տալ նոր հասցե՝ ք. Դիլիջան, Կալինինի փողոց 4-րդ նրբ. թիվ 43:
2. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի 4-րդ նրբ. թիվ 43 հասցեի հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1361.0քմ մակերեսով, քաղ. Ռոզա Հակոբյանի /ծնված՝ 15.08.1950թ./ սեփականության իրավունքով:
3. Պարտավորեցնել քաղ. Ռոզա Հակոբյանին.
1) Իր հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 599

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 հոկտեմբեր 2011թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

2011թվականի նոյեմբերի 17-ին անցկացնել առաջին վերապատրաստումն անցած համայնքային ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնող Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի պետի ատեստավորում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

7

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 600

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10/2 ՀԱՍՑԵԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Էդիկ Ալիխանյանը՝ Դիլիջանի Շահումյան փողոցի վրա գտնվող, իր սեփականությունը հանդիսացող արտադրական շենքի սպասարկման հողամասի հողհատկացման հիմքերի վերականգնման խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն սեփականության վկայագրի, Շահումյան փողոցի վրա գտնվող արտադրական շենքը՝ 760.0քմ սպասարկման հողամասով, պատկանել է «Արարատ» փոքր ձեռնարկությանը: Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. սեպտեմբերի 7-ի թիվ ՏԴ-0355/02/09 վճռի, նշված արտադրական շենքը՝ սպասարկման հողամասով, սեփականության իրավունքով պատկանում է քաղ. Էդիկ Ալիխանյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118 հոդվածի, 23 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Շահումյան փողոցի վրա գտնվող արտադրական շենքին՝ 760.0քմ սպասարկման հողամասով, տրամադրել նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 10/2:

2. Վերականգնել Դիլիջանի Շահումյան փողոցի թիվ 10/2 հասցեի արտադրական շենքի՝ 760.0քմ սպասարկման հողամասով, հողհատկացման փաստաթղթային հիմքերը, քաղ. Էդիկ Ալիխանյանի սեփականության իրավունքով:

3. Պարտավորեցնել քաղ. Էդիկ Ալիխանյանին

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ